ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- օգոստոսի 2023 թվականի №-Ա

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ№0623 ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷՖԱՐՎԻ Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի օգոստոսի 11-ի գրությամբ (հայտով) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մինչև 2024 թվականի հուլիսի 31-ը երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան)՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0623 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ№0623 լիցենզիա) ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, որն ավարտվում է 2023 թվականի սեպտեմբերի 1-ին: Ընկերությունը հայտին կից ներկայացրել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2023 թվականի հուլիսի 20-ի №ՀՎ/22.2/20562-2023 գրությունը, համաձայն որի՝ Նախարարության գնահատմամբ Կայանի կառուցման ձգձգումներն էական վնաս են հասցնում էլեկտրաէներգետիկ համակարգին, ինչպիսիք են արտադրող նոր հզորության համալրման ուշացումը, ռեժիմների պլանավորման փոփոխությունները, դրանք նաև տարաժամկետում են էներգետիկայի բնագավառի մի շարք ռազմավարական փաստաթղթերում ամրագրված միջոցառումները և առաջ են բերում դրանք ևս փոփոխելու անհրաժեշտություն: Ապա Նախարարությունը, այնումենայնիվ, կարևորելով Կայանի կառուցման ծրագիրը,

հայտնել է, որ սահմանված կարգով կդիմի Կառավարությանը՝ նոր պայմաններով ծրագիրը շարունակելու նպատակահարմարությունը քննարկելու համար,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 77-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետություն-մասնավոր գործընկերություն գործարքի շրջանակում տրամադրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտն ի թիվս այլնի պետք է պարունակի նաև հայցվող ժամկետի առնչությամբ գործարքի շրջանակում Կառավարության լիազոր մարմնի դրական դիրքորոշումը,

գ) Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը մերժում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում Կարգի պահանջներին,

դ) Ընկերության 2023 թվականի օգոստոսի 11-ի՝ ԼԷ№0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում Կարգի պահանջներին: Մասնավորապես, Ընկերությունը հայտով չի ներկայացրել Կարգի 77-րդ կետի 1-ին ենթակետով պահանջվող պետություն-մասնավոր գործընկերություն գործարքի շրջանակում տրամադրված՝ ԼԷ№0623 լիցենզիայով ամրագրված կայանի կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայցվող ժամկետի առնչությամբ Կառավարության լիազոր մարմնի՝ Նախարարության դրական դիրքորոշումը: Ինչ վերաբերում է Ընկերությանն ուղղված՝ Նախարարության 2023 թվականի հուլիսի 20-ի №ՀՎ/22.2/20562-2023 գրությանը, ապա այն չի կարող դիտվել որպես Կարգի վերոնշյալ կետով պահանջվող դրական դիրքորոշում, քանզի դրանով, ինչպես արդեն նշվել է, Նախարարությունն ընդամենը հայտնել է հարցի քննարկման համար Կառավարություն դիմելու պատրաստակամության մասին: Ավելին, Կառավարության, Ընկերության և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ.-«ԷՖԷսԷլ Սոլար» Էս. Էլ.-ի միջև կնքված՝ Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ Կառավարության աջակցության

համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին երկրորդ լրացուցիչ համաձայնագրի նախագիծը, որով առաջարկվում էր կայանի նախատեսված կոմերցիոն շահագործման ամսաթիվը երկարաձգել՝ սահմանելով մինչև 2024 թվականի հուլիսի 31-ը (ինչի հիման վրա նույն ժամկետով կարող էր երկարաձգվել նաև ԼԷ№0623 լիցենզիայով ամրագրված կայանի կառուցման ժամանակահատված), ներկայացված է եղել տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի քննարկմանը, սակայն հավանության չի արժանացել և անգամ չի ներկայացվել Կառավարության քննարկմանը, և

հիմք ընդունելով Կարգի 78-րդ կետը և 79-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 11-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված ԼԷ№0623 լիցենզիայով ամրագրված կայանի կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2023թ.